Կայքում ապրանք ավելացնելու համար անհրաժեշտ է բացել անձնական էջի ապրանքներ բաժինը, սեղմել ավելացնելու կոճակին՝




Այնուհետև բացված էջում՝

- լրացնել ապրանքի անվանումը, ցանկալի է 3 լեզվով, քանի որ կայքը եռալեզու է:
- ըստ ցանկության լրացնել նկարագրություն
- լրացնել գինը: Սկսած կոճակը սեղմելուց կայքում գնի դիմաց հայտնվում է սկսած բառը: Գինը կարող էք նաև չլրացնել:



- Ընտրել բաժինը և հաստատել, որից կախված կբացվի ֆիլտրերն ու չափորոշիչները




Ֆիլտրերը ընտրելուց և հաստատելուց հետո, բացվում է չափորոշիչները ընտրելու կոճակը՝




***Նշում՝** կցված ֆիլտրերը և չափորոշիչները ցուցադրվում են կայքի Ապրանքներ բաժնում, որտեղ կայքից օգտվողը կարող է տեսնել դրանք և ըստ դրանց ֆիլտրել ընդհանուր ցանկը:

Այնուհետև կարող եք տեղադրել ապրանքի նկարը: Չտեղադրելու դեպքում կայքում ցուցադրվելու լռելյայն նկարով:
Ինչպես նաև տեղադրել այլ նկարներ պատկերասրահում:

Նկարի չափը, որպես հուշում տված է: Ցանկալի է պահպանել տվյալ համաչափությունը:




Ավելացված ապրանքը պահպանելուց հետո հայտնվում է անձնական տվյալների ապրանքներ էջում, սակայն կայքում չի երևում մինչև ադմինիստրատորը չհաստատի:

***Նշում՝** գրանցվելուց ակտիվանում է անվճար փաթեթը, որը թույլ է տալիս ընդհանուր առմամբ ստեղծել 6 հայտարարություն, մասնագետ: Ստեղծելով օրինակ 6 ծառայություն անվճար փաթեթի ներառումը կավարտվի և հնարավոր չի լինի ավելացնել ապրանք կամ մասնագետ: Հետագայում կարող եք ձեռք բերել փաթեթներ այլ ներառումներում՝ մասական կամ տարեկան տարբերակով: Փաթեթները կարող եք տեսնել անձնական տվյալների համանուն էջում կամ կայքի [Դառնալ գործընկեր](#) էջում:

Ապրանքը կարող եք բարձրացնել թոփ կամ ցուցադրել կայքի գլխավոր էջում: Վճարովի փաթեթներն տալիս են որոշակի քանակով անվճար կիրառել տվյալ գործիքները, սակայն դրանց ավարտից հետո կարող եք օգտվել հատավճար տարբերակից:

Ավելացված ապրանքի տեսքը անձնական տվյալներ էջում:




Ավելացված ապրանքները կարող եք ջնջել, խմբագրել, ինչպես նաև ապաակտիվացնել(աչքի նշանով կոճակի միջոցով):

Կայքում յուրաքանչյուր օգտատեր կարող է դիմել վաճառվող ապրանքի համար, դուք դրանք կարող եք տեսնել անձնական տվյալների հետադարձ կապ բաժնում: